

## «ԱՆԼՈՒՆԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ» ՊՈՆՄԻ ՓԱՂԱՓՈՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԿԵՏՈ

### Ա. Ա. ՏԵՐ - ՄԻՆԱՍՅԱՆ

Սևակի քնարերգության, այդ թվում «Անլուելի զանգակատուն» պոեմի մասին բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ և հոդվածներ են գրվել, արտահայտվել են հակասական կարծիքներ: Ծավալվել է նաև երկու թեժ բանավեճ: Առաջինը սկիզբ է առել “НОВЫЙ МИР” ամսագրում «Ուշացած իմ սեր» պոեմի՝ Ե. Եվտուշենկոյի թարգմանությամբ ուսերեն տպագրությունից հետո, որը տևել է մի քանի տարի: Երկրորդ բանավեճը կազմակերպվել է «Ավանգարդ» թերթի խմբագրությունը՝ քննարկելու «Նորից քեզ հետ» ժողովածուն: Այդ բանավեճերը լավագույնս ներկայացված են գրականագետ Ա. Արիստակեսյանի՝ Սևակին նվիրված արժեքավոր ուսումնասիրության մեջ<sup>1</sup>:

Պ. Սևակի ժառանգության ուսումնասիրության գործընթացը շարունակվում է. միայն 2001 թվականին տպագրվել է բանաստեղծի քնարերգությանը նվիրված երկու ծավալուն մեծագրություն<sup>2</sup>: Սույն հոդվածի նպատակներից դուրս է որևէ կարծիք փնտրելիք: Պարզապես ցանկանում ենք ուշադրություն հրավիրել մի իրողության վրա, որը, մեր կարծիքով, առայժմ կամ տեղ չի գտել նախորդ ուսումնասիրողների հետաքրքրությունների շրջանակներում, կամ հատուկ ուշադրության չի արժանացել: Խոսքը վերաբերում է «Անլուելի զանգակատուն» պոեմի աշխարհայացքային առանձնահատկություններից մեկին՝ այն գրելու *նպատակին*, և ոչ թե շարժառիթներին կամ թեմատիկային:

Այս պոեմը բանաստեղծը թվագրել է 11. 9. 57. - 28. 11. 58 թ.: Պոեմի ստեղծման բուն նպատակը և բանաստեղծի հայրենեգության աշխարհայացքային այս փուլի առանձնահատկությունները հասկանալու համար կարևոր է հիշել այդ տարիների և դրանց նախորդող ժամանակահատվածների հասարակական-քաղաքական տեղաշարժերը: «Անլուելի»-ին նախորդող վերջին երկու տասնամյակներն այնքան էլ արգասաբեր չէին եղել հայ քնարերգության համար: XX դարի 30-ական թվականների բռնություններն ու վայրագ գրաքննությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին փոքր-ինչ թուլացել էին, և Ս. Զորյանն ու Դ. Դեմիրճյանը դժվարությամբ, բայց կարողացել էին տպագրել իրենց պատմավեպերը, որոնք, ճիշտ է, ազդարարված էին որպես ֆաշիզմի դեմ պայքարող հայ զինվորներին անցյալի հերոսական պայքարի օրինակներով ոգեշնչելու փորձ, բայց ավելի շուտ ժողովրդի կողմից ընկալվել էին որպես ազգային երազանքների շուրջ համախմբման և ինքնուրույն պետականության հասնելու նպատակների արժարժույթներ: Փոքր արձակն ու քնարերգությունն էլ, առիթից օգտվելով, զովերգում էին հայ զինվորների սխրանքը, հայ մարդու հայրենասիրությունը, նրա ատելությունը հին ու նոր նվաճողների հանդեպ: Երբեմն էլ սահուն անցումներ էին կատարում պատմական թեմաների՝ ըստ էության դարձյալ արտահայտելով անկախության ու ինքնուրույն պետականության վերականգնման հայ ժողովրդի հավաքական երազանքը: Այդ գործընթացն առավել դյուրին է դառնում և արմատավորվում հատկապես Ստալինի մահից հետո՝ խորուշույան ձևալեզի տարիներին, երբ, ձեռքազատվելով պարտադրված կաղապարներից, գրականությունը թարմանում է բոլոր առումներով (թեմատիկ, գաղափարական, կառուցվածքային և այլն), և սկսվում է գրական նոր փուլի ձևավորումը, որը մի քանի տարի անց դառնում է տիրապետող և այժմ հայտնի է 60-ական թվականների գրական նոր շարժում անունով: Այդ շարժման առավել տիպական բնորոշումներից մեկը տրված է Ս. Աղաբաբյանի «Անհատի

<sup>1</sup> Ա. Արիստակեսյան, Պ. Սևակ, Եր., 1974 թ.:

<sup>2</sup> Տես՝ Դ. Գապարյան, Պ. Սևակ, Եր., 2001 թ. և Լ. Աբգովմանյան, Պ. Սևակի պոեմները, Եր., 2001 թ.:

կոնցեպցիայի անկյունաքարը» հողվածույն. «Արվեստի արդիականության չափանիշների բազմազան համակարգի մեջ առաջնային, կարելի է ասել *ճակատագրական* համարվեց մարդու հոգու խորությունների, նրա հոգեկան կառուցվածքի ճանաչման չափանիշը, անհատականության յուրացումը՝ կյանքի հետ ունեցած բազմազան հարաբերությունների լայն շրջագծի մեջ: ... Դեպի «մարդու ներանձազն» ուղղված հայացքի շնորհիվ գրականության մեջ գործի դրվեցին կյանքային հարուստ պաշարներ, իսկ կեցության բազմազան շերտերը, իրենց հերթին, հրահրեցին գրականության վերլուծական ընդգծումը իմն է - Ա. Տ-Մ.) ուղղությունը, որի վրա դրվեցին մարդու և կյանքի փոխհարաբերությունները, *մարդու արժեքայնության աստիճանը* սահմանելու գեղարվեստական ծանրակշիռ խնդիրներ»<sup>1</sup>:

«Անլուելի զանգակատուն» պոեմը գրելու արտաքին պայմաններից բացի, առկա էին նաև ներքինները. դրանցից առանձնացնենք երեքը:

Կար հայոց՝ թեկուզ կիսանկախ պետականությունը, և հայ ժողովուրդն իրական հայրենիքի փոքրիկ պատահիկի վրա եղեռնից Ռեսո բավականին վերագտել էր իր հոգևոր ու կենսական ներուժը:

Սիյուդում ձևավորված հայկական գաղթօջախներում ակտիվորեն գործող ազգային կուսակցությունները հետևողականորեն բարձրացնում էին Հայ դատի խնդիրը:

Վերջապես ազգային զարթոնքի կարևորագույն նախապայմանը հայ ժողովրդի հավաքական հիշողությունն էր անցյալի ողբերգական և հերոսական իրադարձությունների մասին, որի շնորհիվ, հատկապես, նա երբեք չէր դադարել ներքուստ ամբողջական հայրենիքի պահանջատեղը լինելուց և պատրաստ էր հարմար առիթի դեպքում բարձրացնել անկախ պետականություն հռչակը:

Իսկ ո՞րն էր պետականություն չունեցող կամ կիսանկախ ժողովրդի բանաստեղծի դերը, որին քանի՞ դար արդեն դատապարտված էին հայ գրողները: Ինչպես միշտ, դարձյալ հայ գրողը կոչված էր լինել իր ժողովրդի հոգևոր առաջնորդը, ըմբռնել նրա կենսական մղումները, խորապես ապրել նրա հավաքական ճակատագրով, նրա իղձերն ու երազանքները ձուլել իր արվեստի քուրայում և որպես քերթություն՝ վերադարձնել նրա՝ դարձնելով առավել տեսանելի, հասկանալի ու սիրելի: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ 1960-80-ական թվականների հայ գրողներից շատերը անդրադարձան դարասկզբի իրադարձություններին, կորսված հայրենիքի կարոտի ու նրա հետ վերադարձի թեմաներին: Ընթերցողը հատկապես մեծ ոգևորությամբ էր ընդունում այդ թեմաներով գրված մեծածավալ երկերը՝ Խ. Դաշտենցի «Խողեղան» վեպը, Ս. Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը, Հովհ. Օիրազի «Հայոց դանթեսկանը» պոեմի տակավին անտիպ ու անավարտ ձեռագիր պատահիկները և, իհարկե, Պ. Սևակի «Անլուելի զանգակատունը»:

Միշտ է, այս պոեմի այլուժեն արտաքուստ բարդ չէ, բայց իրականում այն բազմաշերտ է, բազմաբովանդակ և այնքան ընդգրկուն, որ կարելի է ասել՝ հասնում է դարաշրջանի ընդհանրական բնութագրի մակարակիին: Արևելքում (Հայաստանում, Թուրքիայում) տեղի ունեցող դեպքերը քննարկվում են եվրոպական մեծ ու փոքր տերություններում ծավալվող քաղաքական իրադարձությունների համապատկերի վրա: Համաշխարհային առաջին աշխարհամարտը և նրան նախորդող ու հաջորդող միջպետական դիվանագիտական խաղերը պատմագիտորեն մեկնաբանվում են իրենց բոլոր հիմքերով, շարժառիթներով ու նպատակներով: Եվ այս ամենը կատարվում է գրական խոսքի ամենաբարդ տեսակի՝ քնարերգության միջոցով: Ու թեպետ պոեմում, ինչպես Սևակի մյուս երկերում, առանձնահատուկը վերլուծական – տրամաբանական գիծն է, սակայն դա չի արվում ի հաշիվ քնարականության, իսկ կիրառված ոճական տարրեր ձևերի համադրությունը միանգամայն ներդաշն է պոեզիայի օրենքներին:

Երբ *ռուսական սվինը անձնատուր է անում թուրքական բազում բերդ ու բերդակալ*, և թվում է, թե մոտ է Թուրքիայի լծից ազատվելու հայ ժողովրդի դարավոր երազանքի իրականացումը, եվրոպական տերությունները հիշում են, որ կա նաև հարցերի լուծման «քաղաքակիրթ» ճանապարհ, և ըստ էության, արևելքում Թուսաստանի առաջխաղացումը կասեցնելու նպատակով վեհաժողով են հրավիրում Սան-Ստեֆանոյում, որտեղ և *մեջտեղ են բերում* նաև Հայկական հարցը, որի շուրջ փքուն ճառեր արտասանելուց Ռեսո ընդունվում է հանրահայտ «16 – որ հողվածը»:

<sup>1</sup> Ս. Աղաբաբյան, Ժամանակակից հայ արձակը, Եր., 1981, էջ 192-193:

... Բայց ամեն մեկը այնքա՛ն շատ ճառեց,

Մինչև որ հարցը բավական սառեց ...

... Ո՞ր մի թիվ մնաց ... համեստից համեստ.

Մնաց 16-

«Հայկական հողված»...<sup>4</sup>

Ծավով, վրդովմունքով ու դառն հեզմանքով է նկարագրվում նաև Հայկական հարցի երկրորդ քննարկումը Բեռլինում, որի արդյունքում գերտերությունները էլ ավելի հետացան իրենց՝ դեռ երեկ տված հայանպաստ խոստումներից՝ ավելորդ անգամ հաստատելով «երկաթե շերեփի» դաժան ճշմարտությունը:

Իսկ մեր հա՛րցը, մե՞նք...

... Մի թիվ էր եթե Սան - Ստեֆանոյում,

Բեռլինում արդեն նա դարձավ մի մատ (էջ 76-77):

Սևակը նույն խորությամբ մեկնաբանում է նաև ողբերգական իրադարձությունների ներքին դրդապատճառները, եղեռն իրականացնող բարբարոսների նպատակները: Պատճառներից գլխավորը, անշուշտ, ազատություն և անկախություն տեճացող հայ ժողովրդի և իր տարածքները բռնազավթած տերության՝ Թուրքիայի միջև գոյություն ունեցող 500-ամյա հակասությունն էր: Այս հիմնական պատճառից Սևակը ածանցում է նույնքան կարևոր այլ պատճառներ: Թեպետ օտարի լուծը միշտ էլ անտանելի է, սակայն առավել անտանելի է այն լուծը, որ դրվում է քաղաքակրթությամբ, մշակույթով, պատմությամբ ու կենցաղով անհամեմատ ցածր մի ժողովրդի կողմից, այն էլ դարավոր հարուստ մշակույթ ու քաղաքակրթություն ունեցող ժողովրդի ուսին: Այս իրավիճակը անընդունելի է ոչ միայն ճնշվողի համար, այլև ճնշողի, որովհետև վերջինս, գիտակցելով մակարդակների այս տարբերությունը, վախ է զգում, որ քաղաքակրթությամբ իրենից բարձր ազդե էրբեք չի համակերպվի այդ լծին և ցանկացած հարմար պահի կաշխատի թոթափել այն:

Կյանքում կան բաներ, որոնք չեն ներվում

Ինչպես դրացուն,

Այնպես էլ համայն մի ժողովրդի:

Չի ներվում և այն,

Ինչը կոչվում է առավելություն... (էջ 180)

Իսկ այդ առավելությունները շատ էին: Իրենց հազարամյա բեօրբանում ապրող հայերը, ի տարբերություն քոչվոր-նվաճողների, գիտեին «...սիրել ու առել... ծարավել լույսին... արևին ծպտալ...»: Հայ ժողովրդի համդեպ անհամարող ժողակաճությունը սաստկանում էր հատկապես այն պատճառով, որ թուրքերի նկատմամբ նրա ունեցած առավելությունների մասին գիտեին և բարձրաձայն խոսում էին ողջ աշխարհում:

Եվ քաղաքակիրթ այն Եվրոպայում...

... Օտտերի համար դարձել էր փեշակ

Մեզ երկի՛նք հանել՝

Հային անվանել

Ասիական մթնում գիտության մշակ...

Իսկ թուրքին կոչել բիրտ ու բարբարոս... (էջ 181)

Ուստի օսմանյան կայսրության մեջ հայ-թուրքական բախումներն անխուսափելի էին, որի արդյունքում հայերը հաճախ ցույց էին տալիս հզոր դիմադրություն, կազմակերպում ինքնապաշտպանական կոիվներ՝ հաճախ ծանր հարվածներ հասցնելով և՛ թշնամու զինուժին, և՛ կայսրության ներքին կայունությանը, և՛ արտաքին քաղաքականությանը: Հատկապես վերջին 100-ամյակում այդ հակասությունը խորացել էր՝ կապված հայ ժողովրդի ոռուսական կողմնորոշման և Արևելյան Հայաստանի՝ արդեն իսկ Ռուսաստանին միանալու փաստով: Բնականաբար, հայության մյուս զանգվածը ևս ձգտում էր միանալ Ռուսաստանին: Այս փաստը ավելի էր գրգռում թուրքական ատելությունը հայերի հանդեպ, և նրանք առիթը բաց չէին թողնում պարբերաբար ջարդեր կազմակերպելու միջոցով կտրել հայկական դիմադրությունը: Այս պարագայում էր, որ նախ Սուլթան Համիդը, ապա նաև երիտթուրքերի կառավարությունը

<sup>4</sup> Պ. Սևակ, Երկերի ժող. 6 հատորով, Բ. 4, էջ 75-76: Պոեմից մեջբերումների հղումներն այսուհետև կտրվեն տեքստում՝ նշելով էջերը:

մտահղացան և իրագործեցին սկզբում զանգվածային ջարդերը, ապա նաև՝ ցեղասպանության ամբողջի ոճիրը: Եղեռնի պատկերների հոգեցունց նկարագրությունների կողքին Սևա-կը պատկերում է նաև հայ ժողովրդի դիմադրության հերոսական դրվագներ, երբ Արևմտյան Հայաստանի տարբեր հատվածներում ժողովուրդը անհավասար, բայց հերոսական զուտե-մարտի էր ելնում:

**Սասունը...**

**Արդեն ո՞րերորդ անգամ**

**Նորից տեր դարձավ ճոր Դավիթ մանկան...**

**...Ահեղ ջարդերի ճարակող բոցում**

**Ամեն սասունցի դարձավ Սասնա ծառ...**

**...Կամ՝**

**Կիլիկիո տունը՝**

**Անառ Ջելթունը...**

**...Շեկ բուրվառի հետ**

**Սև վատող խնկեց...**

**...Քանզի բացվել էր Հերոսությունը,**

**Որպեսզի իր տաք**

**Կրունկների տակ**

**Ազատությունը ահարկու թնդա(էջ 88-89):**

Սակայն հայ ժողովրդի մաքառումները որպես կանոն ավարտվում էին հուսախաբու-թյամբ, քանզի եվրոպական քրիստոնյա տերությունները, որոնք խուսրով ու թղթով անվերջ ոգևորում էին նրան՝ թոթափելու Թուրքիո լուծը, խոստանում ոչ միայն բարոյական, այլև նյու-թական օգնություն, օրհասական պահերին դրժում էին իրենց խոստումը, իսկ հաճախ պար-զապես օգնում բարբարոսներին: Եվ, ըստ էության, հայ ժողովուրդը մեն-մենակ էր մնում դա-հիճների դիակալության առաջ, որոնց ոչ ոք չէր խանգարում սառնասրտորեն իրագործելու ի-րենց ոճիրները: «Խանգարե՛լ: Ինչի՞ համար...», - այս հարցադրմամբ է սկսվում «Ղողանջ ե-ղեռնական» գլուխը: Չխանգարելը դեռ չարյաց փոքրագույնն էր: Գաղտնիք չէ, որ 1915թ. ե-ղեռնի կազմակերպիչներին գլխավոր օժանդակողն ու սատար կանգնողը գերմանական կայսրությունն էր:

**Հիմա Օսմանի թոռները բռի**

**Վիլհելմ կայսեր հետ ուզեցին քերել**

**Դարերով հնչող «Հայաստան» բառի**

**Բոլոր տառերը...**

**...Իսկ Գլադստոն- Ջորջ Լլոյդները**

**Չխանգարեցի՛ն... (էջ 182-183)**

Դարաշրջանի քաղաքական բնութագրին զուգահեռ զարգանում է պոեմի հիմնական սյուժեն, որն իր կուռ ամբողջականության մեջ, այնուամենայնիվ, բաղկացած է բազմաթիվ են-թապայուծներից: Ընթյուն է, պոեմի գլխավոր հերոսը Կոմիտաս վարդապետն է, բայց պոեմի ա-մեն մի ղողանջ ունի իր ինքնուրույն, ամբողջական ու ավարտուն սյուժեն, որը երկի ընդհանուր համակարգում ենթապայուծի արժեք ունի: Եվ այս ենթապայուծների (որոնցից շատերի մեջ հա-ճախ չի խոսվում Կոմիտասի մասին) սերտ ձուլվածքից է կազմված բուն սյուժեն: Միաժամա-նակ, ընդունելով դասական ըմբռնումը, ըստ որի՝ էպիկական ժանրում սյուժեն կերպարների զարգացման առանձնահատկությունն է՝ դժվար չէ նկատել, որ «Անլուելի զանգակատուն» պոե-մում բուն սյուժեն զարգանում է ոչ թե մեկ, այլ երկու գլխավոր հերոսների՝ Կոմիտասի և հայ ժո-ղովրդի հավաքական կերպարների միջոցով, որոնք, բազմաթիվ հատվածներում նույնանալով հանդերձ, այնուամենայնիվ, էապես անջատված են իրարից: Եվ մեր կարծիքով՝ պոեմի գաղա-փարական բովանդակության բարձրակետը կազմում են հենց այդ հատվածները: Խոսքը հատ-կապես վերաբերում է «Ղողանջ մթազմումի» և «Ղողանջ ցնորումի» գլուխներին:

Հիմնավորենք ասվածը: Պոեմում Կոմիտասի՝ առանց այն էլ պատմականորեն սիրելի կերպարը Սևակի կողմից կերտվել է առավելագույն երկյուղածությամբ ու պաշտամունքով: Նրա կենսագրության և բնավորության բոլոր կողմերը՝ անսահման բարությունը, հոգու անա-ղարտությունը, հայրենասիրությունը, մարդասիրությունը և այլն, մատուցված են զուներ

պատկերներով՝ Քասցված նաև նպատակառոտ դրված չափազանցությունների: Կոմիտասի կերպարը, ասես, ոչ թե մահկանացուի, այլ աստվածային էակի հետ է նույնացված: Եվ թվում է՝ այդ մաքրամաքուր, սրբազան, մարդկային կատարելության խորհրդանշի դարձած էակի հոգեկան կամ ֆիզիկական կործանումը համարժեք է համաշխարհային աղետի, նույն ջրհեղեղի, աշխարհավեր երկրաշարժի, դրանցից ավելի մեծ մի արհավիրքի: Եվ այդ արհավիրքն իրականանում է: «Ղողանջ ցնորման» գլխում, հատկապես, Սևակին հաջողվում է ցույց տալ, որ Կոմիտասի հոգեկան կործանումը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկության անդառնալի կորուստներից մեկն է:

...Ով մազապուրծ էր մահից, վարդապետ,  
Քեզ կորցրնելու ցավից ահավոր...  
...էրվում եմ, էրվում այրվելով երգեց...  
... Ով առուփախով, գաղթով էր փրկվել...  
...Երկնքին նայեց լուռ պաղատանքով...  
...Ինչ եկեղեցի, որ չէր ավիրվել...  
...Պատարագիչի դողդոջ շուրթերով  
Պահպանիչ ասաց՝ կյանքիդ ի խնդիր,  
Սակայն... չփրկե՛ց.  
Հայացքըդ կրկին անկենդան մնաց,  
Գլուխըդ, որ ցարդ լուսատու էր մի,  
Գարձավ մուրախ՝ պաղած ու անլույս... (Էջ 213)

Բայց սա դեռ Սևակի ասելիքի բարձրակետը՝ չէ: Արդեն կայացած ողբերգության՝ Կոմիտասի խելագարության փաստի պատկերավոր նկարագրությամբ ցնցելով ընթերցողի հոգին, ասես նրան մասնակից դարձնելով պոեմում ծավալված ողբերգություններին՝ հեղինակը ասպարեզ է հանում առավել հոգեցուցիչ, առավել ողբերգական մի փաստ, որի արդյունքում ասես «արժեզրկվում են» իր իսկ ձեռքով սրբության խորհրդանշի դարձած Կոմիտաս վարդապետի հոգևոր կործանումը, թուրք բարբարոսների կողմից հայ մտավորականների, նույնիսկ միլիոնուկես հայերի գազանաբարո ոչնչացումը: Սևակի կարծիքով՝ այդ անլուր ողբերգությունները դեռևս ամենասարսափելին չեն. ամենասարսափելին գալու է հետո՝ և նրա՛նց համար, ովքեր հրաշքով փրկվեցին այդ ահազարհուր սպանդից, բայց ականատեսը եղան իրենց հայրենիքի հայաթափմանը, գրկվեցին իրենց «պոռթկուն թոճրի տաքից, իր մորից, հորից, յարից, իր բնից ու աշխարհից» (Էջ 213), ովքեր այլևս միայն երազում կվերադառնան իրենց պապերի, հայրերի ու իրենց ծննդավայրը, ովքեր տեսան հարազատների խոշտանգումներն ու սպանությունները, բայց ոչ միայն օգնել չկարողացան, այլ նույնիսկ՝ հողին հանձնել... Նրանց «խելամիտ» գոյությունն այս աշխարհում այլևս պայմանական է միայն: Ի տարբերություն Կոմիտասի, որ մեկեն կորցնելով բանականությունը, ասես փրկվեց անվերջ խելագարվողի հոգեմաշ տառապանքից՝ ողջ մնացածները ամեն օր են խելագարվում՝ բայց այդպես էլ չհասնելով բացարձակ մթազնումի «երանությանը»: Այսպես՝ մշտական խելագարության մեջ ապրող մի ամբողջ սերունդ քարշ է տվել իր գոյությունը՝ երբեք չհաշտվելով կորսված հայրենիքի իրողության հետ, ու ծնել նաև որդիներ, թոռներ, որոնք աշխարհ են եկել ծնողների ու պապերի արյան մորմոքն ու տառապանքը երակներում, ասել է թե՛ ... դարձյա՛լ խելագարված: Եվ այդ խելագարությունը առավել անբուժելի է ու ծանր, քան Կոմիտասներինը:

...Վարդապետ իմ խեղճ,  
Բայց և քախտավո՛ր,  
Բայց և քախտավո՛ր, որ չգիտեիր,  
Թե հայ կորովի երիտասարդներ...  
...Մասիսի դիմաց կնստեն գնացք,

<sup>5</sup> Գրելով «դեռ ... բարձրակետը չէ»՝ մենք նկատի չունենք պոեմի ֆարսիան, ուր նշված՝ «Ղողանջ ցնորման» գլուխը ոչ թե նախորդում, այլ հաջորդում է «Ղողանջ մթազնումի» հատվածին, այլ պլոտին, որի մեջ հեղինակը պարտավոր չէ անպայման պահպանել դեպքերի պարզ հաջորդականությունը և կարող է կոնֆլիկտի զարգացումն ու լուծումը իրականացնել ստեղծագործության ցանկացած հատվածում:

Որ գնան կազրեկ,  
Էլբըրուս գնան,  
Լեռներ մազլցեց

Նույնիսկ հեռավոր սահմանի վրա հնդկատուսական,  
Մինչդեռ Մասիսի լանջը կուսական  
Մատեն՝ր է տեճուտ՝  
Հայի տա՛ք մատներ,  
Որ հավեն իրեն,  
Իրեն գորգորեն՛ն,  
Իրեն ունենա՛ն...

...Դե՛, մի՛ թոցըրու խելքըդ, Վարդապե՛տ... (Էջ 210)

Դժվար չէ նկատել, որ անվերջ շիկացող այս հատվածի հոգեբանական կրողն արդեն ներկա սերունդն է: Նրա՝ տարերայնորեն փոթորկվող ու հատակորեն չձևակերպված ապրումները բանաստեղծը սեղմում- առարկայացնում է մի հասկացության մեջ՝ «խենթություն», բայց խենթությունն ո՛չ այն իմաստով, որ ի ծնե բնորոշ էր հայկական ժողովրդական վիպերգի ծներին, այլ մղձավանջային մի հոգեվիճակ, որ հարկադիր է ու ձեռքբերովի, որի սկիզբը մոտ անցյալի ողբերգական իրադարձություններն են ու նրանց արդյունքում՝ բռնազավթված հայրենիքի անեզր կարոտը:

Վարդապետ թշվա՛ռ, բայց և բախտավո՛ր.

Քո մտքով անցա՛վ, որ Մասիսն, այո՛...

...Մեզ անխղճաբար պիտի գրգռի՛...

...Մազնիսի նման անվերջ ձգելով՝

Գեթ մոտիկանալ թույլ չտա բնավ...

–Դե ե՛կ, Վարդապե՛տ,

Ու մի՛ խենթանա...

...Մեր հայրենասեր թագավորներին ու հերոսներին

Այսպես պարսկական դահիճներն էին մորթազերծ աճու՜մ...

...Ու բռնի դնում

Մորթազերծվածին պաշտողի առաջ...

...Արարատն – այսպե՛ս – դրել են ահա Երևանի դեմ...

– Դե ե՛կ, Վարդապե՛տ... (Էջ 210-211)

Ահա այս տողերն են կազմում պոեմի գաղափարական բովանդակության բարձրակետը՝ այն ամենակարևորը, որ տվյալ պահին բանաստեղծը ցանկանում էր ասել իր ժողովրդին: Պատահական չէ, որ պոեմի տպագրվելուց քիչ անց հատկապես այն տողերը տեղ գտան հայ դերասանների ասումը քաջանկերի մեջ: Ի թիվս այլ գործերի՝ հատկապես պոեմի այն հատվածն էր (այն էլ ոչ մեկ անգամ) արտասանվում մահ 1965 թ. ապրիլի 24-ին կոմիտասի անվան պանթեոնում սկիզբ առած 1915 թ. եղեռնի զոհերի հիշատակին նվիրված առաջին ազգահավաքի ժամանակ:

Նշանակում է՝ ժողովրդի հավաքական գիտակցության (կամ ենթագիտակցության) մեջ հենց սկզբից գտնված էր պոեմի բարձրակետը: Մինչդեռ այս փաստի գրականագիտական հստակ ձևակերպումը տակավին չի տրված:

Նշված գլուխներին հաջորդող հատվածներում թեև կան բանաստեղծական մտքի և ձևի սքանչելի խոյանքներ, սակայն զնալով նվազում է ստեղծագործության ներքին լարվածությունը: Միշտ է, հատկապես «Ղողանջ վերածննդի» և «Ղողանջ մարմնավորված երազի» գլուխներում Սևակը փորձում է մասամբ մեղմել իր ժողովրդի ցավը՝ մատնանշելով խորհրդային Հասարակական բարեկեցիկ ներկան ու ձեռքբերումները, սակայն այդ հատվածները չեն դառնում արդեն պատկերված ողբերգական փաստերի իրական հակակշիռը: Այո՛. խորհրդային Հասարակական գոյությունն ու առնականացումը մեծ սփոփանք էր հայ ժողովրդի համար, բայց ոչ երբեք համազգային երազանքների վերջնական իրականացում: Այն հիմք էր միայն, կարևորագույն մի հիմք՝ հետագա քայլերի համար: Եվ ընթերցողի հոգում ավելի համահունչ էր ու տպավորիչ «համազգային խելագարություն» փաստի գիտակցումը, քան ի հեճուկս թշնամու՛

իր գոյատևման հաղթանակը, որ միայն մի պահ (մի քանի տասնամյակ) կարող էր բավարար թվալ եղեռնից, գաղթից ու սովից ուժասպառ մի ժողովրդի համար:

«Անդեղի զանգակատուն» պոեմը գրական նոր շարժման նախաշեմին վիթխարի մի ցընցում էր, որի տատանումներն այիքվեցին նաև սերնդակից շատ արվեստագետների երկերում: Այն պատմեցակործան մի պայթյուն էր՝ ասպարեզ բացելու ազգային- հոգևոր կուտակումների պողոթյունների համար, որոնք նախ տարերայնորեն, ապա հունավորված պետք է ընթացանային դեպի ինքնուրույն պետականության գաղափարների հասունացում և հայոց պետականության վերականգնում:

Հարց է առաջանում՝ իսկ ի՞նչ ուղի է նշում բանաստեղծը պատկերված հոգեվիճակից ազատվելու համար: Արտաքուստ՝ ո՛չ մի: Բայց միայն արտաքուստ, որովհետև նախ՝ գեղարվեստական գրականության մեջ տարածված ձև է, երբ հեղինակը, ընթերցողի մեջ հակասություն, անհանդուրժողականություն սերմանելով իրականության հանդեպ (այս դեպքում հայրենիքի կորստի հանդեպ), կամա-ակամա ստիպում է որոնել այդ իրավիճակից դուրս գալու ուղիներ: Ժամանակ էր պետք, որպեսզի ընթերցողը խորությամբ ըմբռներ պոեմի բուն խորհուրդը և հիմնավորապես յուրացներ այն: Դրանից հետո միայն կարելի էր նաև առաջադրել այնպիսի ծրագրեր, որոնք ամփոփված են մի քանի տարի անց գրված «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն...» և հատկապես «Եռանայն պատարագ» պոեմներում, որոնք բանաստեղծի աշխարհայացքային զարգացման հաջորդ փուլի գեղագիտական խտացումներն են:

Չմոռանանք նաև, որ համազգային երազանքների իրականացման ուղիները ո՛չ միանշանակ են, ո՛չ էլ կամային. ավելի հաճախ պայմանավորված են հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ իրավիճակներով՝ երբեմն նույնիսկ հակասելով մեկը մյուսին: XX դարի 50-ական թվականների վերջին կարևորը այդ ուղիների որոնման անհրաժեշտության գիտակցումն ընթերցողի մեջ արթնացնելն էր և ոչ թե ինչ-որ միակ՝ բացարձակ ճշմարիտ ուղու մատնանշումը: Եվ ազգային-ազատագրական պայքար կամ ինքնուրույն պետականության ձգտում ասելով՝ ամենևին պետք չէ հասկանալ միմիայն զինված պայքար ու պատերազմ, որոնք ցանկացած ժողովրդի, առավել ևս հայ ժողովրդի համար ամենաանցանկալին են և միայն ծայրահեղ դեպքում կարող են դառնալ անհրաժեշտություն:

Վերջապես, դարձյալ հիշենք, որ պոեմը գրվել է 1957-1958թթ., երբ այնքան էլ հեշտ չէր քարձրածայն խոսել խորհրդային պետության կազմում գտնվող որևէ ժողովրդի ազգային իղձերի ու երազանքների մասին: Բարեբախտաբար, հայ ընթերցողը պատրաստ էր ճիշտ ընկալելու իր բանաստեղծին և նույնիսկ չասված տողերը լրացնելու սեփական երևակայությամբ:

**А. А. ТЕР-МИНАСЯН - *Апоэзі ідейнаго садыржанія паэмы «Неумолкаемая колокольня».*** - В статье рассматривается одна из главных идей поэмы Паруйра Севака «Неумолкаемая колокольня». Автор статьи считает, что вершинными в идейном отношении являются главы «Звон помрачения» и «Звон помешательства», в которых Севак от исторического прошлого переходит к современности и проводит параллель между душевным состоянием армян нового поколения и трагедией, пережитой свидетелями геноцида 1915 года. Не говоря напрямую о путях преодоления этого состояния, Севак, по сути, ставит вопрос о возвращении захваченных Турцией армянских территорий и о восстановлении армянской государственности. Веско прозвучавший в «Неумолкаемой колокольне», мотив этот найдет свое развитие и в некоторых более поздних произведениях Севака.